Ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման գնային առաջարկի ներկայացման
ՀՐԱՎԵՐ

19 փետրվարի 2024թ.

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՄԶՄԿ) «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում, 2023-2025թթ. նախատեսում է կազմակերպել միջոցառումներ ՀՀ մարզերում բնակվող երիտասարդների մասնակցությամբ:

Ծրագիրն իրականացնում է «Փրոջեքթ Հարմոնի Հայաստան» ՀԿ գլխավորած կոնսորցիումը, որի անդամներն են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտասը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու ընդլայնել դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը:

Միջոցառումները կազմակերպելու և իրականացնելու, ինչպես նաև միջոցառումների մասնակիցների և ծրագրի շահառուների մասնակցությունը Երևանում և մարզերում ապահովելու նպատակով ՄԶՄԿ-ն նախատեսում է գնել ուղևորափոխադրման ծառայություններ:

Սույնով հրավիրում ենք ուղևորափոխադրման ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ մինչև 2024թ մարտի 18-ը ներկայացնելու գնային առաջարկ՝ ըստ աղյուսակներում ներկայացված ուղղությունների:

Երթուղի	**Երթուղու արժեքը ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ**	
	տ/մ տարողությունը 50 տեղ	**տ/մ տարողությունը 20 տեղ**
Երևան – Արմավիր – Երևան		
Երևան – Ծաղկաձոր – Երևան		
Երևան – Գավառ – Երևան		
Երևան – Վայք – Երևան		
Երևան – Գյումրի – Երևան		
Երևան – Վանաձոր – Երևան		
Երևան – Իջևան – Երևան		
Երևան – Գորիս – Երևան		

Խնդրում ենք գնային առաջարկի մեջ նշել.

1. Կազմակերպության անվանումը, կազմակերպաիրավական ձևը,
2. Կազմակերպության ՀՎՀՀ-ն,
3. Կազմակերպությունն ԱՀՀ վճարող է թե ոչ,
4. Կազմակերպության հասցեն և կոնտակտային տվյալները,
5. Տեղեկություններ տրանսպորտային միջոցների մակնիշների և արտադրության տարեթվերի մասին:

Գնային առաջարկը պետք է ստորագրված լինի կազմակերպության լիազորված անձի կողմից:

Տեղեկացնում ենք, որ ծրագիրը ազատված է ԱԱՀ վճարելու պարտավորությունից:

Ամենացածր գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության հետ կվարվի բանակցություններ և կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

Սույն հայտարարության պահանջներին չբավարարող հայտերը ենթակա են մերժման առանց առաջարկը քննելու:

Գնային առաջարկը կարող եք ներկայացնել էլեկտրոնային փոստով՝ agalstyan@ichd.org, կամ առձեռն՝ Սայաթ Նովա 19, «Անի Պլազա» հյուրանոց, բիզնես հարկ, սենյակ 18, հեռ՝ +374 582638:

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ